Արձանագրություն N 3

«ՀԱԷԿ-ՊԸԱՊՁԲ-102/15» ծածկագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար կոմպրեսորի (**ОРУ**-220 կՎ) գնման գնահատող հանձնաժողովի նիստի

**ք.Մեծամոր** **24 դեկտեմբերի 2015թ.**
**ժ.14:30**

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Կարապետյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Օրդուբեկյանը, Ս.Կարապետյանը, Վ.Ստեփանյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն.Հակոբյանը

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և **«ՀԱԷԿ-ՊԸԱՊՁԲ-102/15»** ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սկսեց իր գործունեությունը՝

1. «ՀԱԷԿ-ՊԸԱՊՁԲ-102/15» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման մասին

---

1.1 Հրապարակվեց «ՀԱԷԿ-ՊԸԱՊՁԲ-102/15» ծածկագրով կայանի կարիքների համար կոմպրեսոր (**ОРУ**-220 կՎ) գնման ընդհանուր (նախահաշվային) գինը՝ մեկ թվով արտահայտված՝ 20.000.000 (քսան միլիոն) ՀՀ դրամ: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն հաղորդեց գրանցամատյանում կատարված գրառումների մասին և նախագահողին փոխանցեց հայտի գրանցամատյանը, դրա անբաժանելի մաս հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտը: Քարտուղարը նշեց նաև, որ սույն ընթացակարգի հրավերում 10.12.15թ հրավիրված արտահերթ նիստում կատարվել են փոփոխություններ, մասնավորապես՝ հրավերի 1-ին մասի 1-ին կետում և 2-րդ մասում պայմանագրի անբաժանելի մաս համարվող թիվ 1 հավելվածում նշված գնման առարկայի տեխնիկական բնութագրում **«Կոմպրեսոր 3ՎՇ1.6-3,1/46 ՏՈՒ ՈՒ 29.1-31787440-002:2010 (3ВШ1.6-3,1/46 ТУ У 29.1-31787440-002:2010)»** նախադասությունը փոխարինվել է **«Կոմպրեսոր 3ՎՇ1,6-3/46 Մ3, ՏՈՒ ՈՒ 24000789.001-97 (3ВШ1,6-3/46 М3, ТУ У 24000789.001-97) կամ համարժեքը»** նախադասությամբ՝ հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված ծառայողական գրությունը:

1.2. Ընդունել ի գիտություն, որ նշված ընթացակարգի հայտ է ներկայացրել հետևյալ անձը.

| Չ/Հ | Մասնակցի<br>անվանումը և հասցեն |
|---|---|
| | **«Գիտա-արտադրական բաժնետիրական միություն «ՎՆԻԻկոմպրեսսորմաշ»» Հանրային Բաժնետիրական Ընկերություն (Публичное акционерное общество «Научно-производственное акционерное общество «ВНИИкомпрессормаш»)**<br>ՈՒկրաինա, ք.Սումի, Կուրսկի պողոտա, 6<br>հեռ. +38 (0542) 674-156, էլ. փոստ d.vakal@nicmas.com |
| 1 | **34100 ԱՄՆ դոլարին (04.12.15թ. ԿԲ կուրս 484 դրամ 43 լումա) համարժեք ընդհանուր արժեքով՝ 16.519.063 ՀՀ դրամ (տասնվեց միլիոն հինգ հարյուր տասնինը հազար դրամ վաթսուներեք լումա)** |

2. Ուսումնասիրելով գնային առաջարկի ծրարը, դրանում գտնվող փաստաթղթերը (կցվում են)՝ հանձնաժողովը եզրակացրեց, որ՝

- **«Գիտա-արտադրական բաժնետիրական միություն «ՎՆԻԻկոմպրեսսորմաշ»» Հանրային Բաժնետիրական Ընկերության** ներկայացրած՝

ա/ հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան,

բ/ հայտում առկա փաստաթղթերը ներկայացված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

**Ընդունվեց** որոշում՝ կողմ **– 4, դեմ – 0:**

3. Ներկայացվեց մասնակցի գնային առաջարկը.

| Չափա-բաժնի համարը | Ապրանքի անվանումը | Մասնակցի ներկայացրած գնային առաջարկը (առանց ԱԱՀ) ՀՀ դրամ |
|---|---|---|
| 1. | Կոմպրեսոր օդային 3ՎՇ1,6-3/46 Մ3 ՏՈՒ ՈՒ 24000789.001-97 | **16.519.063 (տասնվեց միլիոն հինգ հարյուր տասնինը հազար դրամ վաթսուներեք լումա)** |

4. Հիմք ընդունելով այն, որ **«Գիտա-արտադրական բաժնետիրական միություն «ՎՆԻԻկոմպրեսսորմաշ»» Հանրային Բաժնետիրական Ընկերության** ներկայացրած գնային առաջարկը բավարարում է հրավերով սահմանված թիվ 1 չափաբաժնի պահանջներին և չի գերազանցում նախատեսված ֆինանսական հատկացումներից, որոշվեց նշված չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Գիտա-արտադրական բաժնետիրական միություն «ՎՆԻԻկոմպրեսսորմաշ»» Հանրային Բաժնետիրական Ընկերության**, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

**Ընդունվեց որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:**

5. Հայտերի գնահատման արդյունքների նպատակով առաջարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«Գիտա-արտադրական բաժնետիրական միություն «ՎՆԻԻկոմպրեսսորմաշ»» Հանրային Բաժնետիրական Ընկերությանը** երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

**Ընդունվեց որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:**

6. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկու օրինակ հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը 12:00-ը, ք.Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ վարչական շենք հասցեում:

**Ընդունվեց որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:**

**Հանձնաժողովի նախագահ՝** .................. **Կ. Կարապետյան**

**Հանձնաժողովի անդամներ՝** .................. **Ա. Օրդուբեկյան**

.................. **Մ. Կարապետյան**

.................. **Վ. Ստեփանյան**

**Քարտուղար՝** .................. **Ն.Հակոբյան**